ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 59.3. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացումը

1. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման ժամանակ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում կատարվում է նշում իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին, և պահպանվում են օրենքով սահմանված տեղեկությունները: Այդ տեղեկությունները համարվում են հանրամատչելի, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ:

2. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացումն արգելվում է, եթե նրա պարտավորությունները գերազանցում են ակտիվները, կամ եթե այդ իրավաբանական անձն ունի Հայաստանի Հանրապետության հանդեպ պարտավորություններ, բացառությամբ, եթե ռեդոմիցիլացման համաձայնություն է տրվել նշված պարտավորությունների կառավարման մասով իրավասու մարմնի որոշմամբ, կամ եթե ունի պարտավորություններ համայնքի հանդեպ, բացառությամբ, եթե իրավաբանական անձի ռեդոմիցիլացման համաձայնություն է տրվել համայնքի ավագանու որոշմամբ, ~~կամ եթե իրավաբանական անձը համարվում է մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող,~~ ինչպես նաև կարգավորվող հանրային ծառայությունների ոլորտի մասնակից կազմակերպություն:

3. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի գործադիր մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ռեդոմիցիլացման մասին որոշում ընդունելուց հետո պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի պարտատերերին, ինչպես նաև ռեդոմիցիլացման մասին իրականացնել հրապարակային ծանուցում՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ռեդոմիցիլացման վերջնական գրանցումից առնվազն երեք ամիս առաջ, եթե ավելի երկար ժամկետ չի սահմանվել ռեդոմիցիլացման մասին որոշմամբ:

4. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման ժամանակ իրավաբանական անձի պարտատերերը մինչև ռեդոմիցիլացման վերջնական գրանցումն իրավունք ունեն պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ դադարեցնելու ռեդոմիցիլացումը կամ վաղաժամկետ կատարելու պարտավորությունը և հատուցելու վնասները:

5. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձը մինչև նշված ժամկետի ավարտը բավարարում է Հայաստանի Հանրապետության և համայնքի հանդեպ պարտավորությունները և պարտատերերի վաղաժամկետ պահանջները:

6. Պարտատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման դադարեցման վերաբերյալ պահանջը ներկայացվում է դատարան մինչև ռեդոմիցիլացման պետական գրանցումը: Եթե պահանջը հիմնված է անվիճելի իրավունքի վրա, և պարտապանը չի կարող այն բավարարել անմիջապես և հատուցել վնասները, կամ եթե պարտատերը Հայաստանի Հանրապետությունն է, ինչպես նաև

եթե կան ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի անվճարունակության հիմքեր, ապա դատարանը ռեդոմիցիլացումը դադարեցնում է մինչև նշված հիմքերի վերացումը:

7. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձը օրենքով սահմանված կարգով ռեդոմիցիլացման դիմումը և օրենքով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը, մասնավորապես՝ պարտավորությունների բավարարման վերաբերյալ ապացույցները կամ իրավաբանական անձի պարտատերերին ռեդոմիցիլացման մասին գրավոր տեղեկացնելու, ինչպես նաև ռեդոմիցիլացման մասին «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակային ծանուցում իրականացնելու մասին, սնանկության վարույթում չգտնվելու վերաբերյալ տեղեկանքը, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքը ներկայացնում է կառավարության լիազոր անձին կամ լիազոր մարմին:

8. Եթե սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դիմումին կից չեն ներկայացվում նույն կետով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը, ապա փոխօգնության կարգով նշված տեղեկատվությունը գրանցում իրականացնող մարմինն օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ստանում է դրան տիրապետող պետական մարմիններից:

9. Օրենքով սահմանված դիմումը, փաստաթղթերը և այլ տվյալները գրանցում իրականացնող մարմին ներկայացնելուց հետո, եթե բացակայում են Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ռեդոմիցիլացումը բացառող հիմքեր, գրանցում իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձին տրամադրում է ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի՝ ռեդոմիցիլացման գործընթացում գտնվելու վերաբերյալ փաստաթուղթ: Ռեդոմիցիլացման գործընթացում գտնվելու վերաբերյալ փաստաթղթի ձևը և բովանդակությունը սահմանում է օրենքով նախատեսված լիազորված մարմինը:

10. Այլ պետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի կողմից տրված շարունակականության նախնական փաստաթուղթը կամ շարունակականության փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության գրանցում իրականացնող մարմին ներկայացնելուց հետո գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացվում է գրառում Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ռեդոմիցիլացման մասին:

(59.3-րդ հոդվածը լրաց. 17.11.16 ՀՕ-206-Ս)

Հոդված 67. Իրավաբանական անձի լուծարումը

1. Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

2. Իրավաբանական անձը կարող է լուծարվել՝

1) նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է.

2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ.

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև ~~սույն օրենսգրքով~~ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված հիմքերով՝ իրավաբանական անձի լուծարման պահանջը կարող է դատարան ներկայացնել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին օրենքով նման պահանջ ներկայացնելու իրավունք է վերապահված:

Դատարանի վճռով իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ իրավաբանական անձի լուծարման լիազորություն ունեցող մարմնի վրա կարող են դրվել իրավաբանական անձին լուծարելու պարտականություններ:

4. Իրավաբանական անձը լուծարվում է նաև սնանկության հետևանքով:

5. Եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

6. Բանկերի, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված Բյուրոյի լուծարման հիմքերի, կարգի, ինչպես նաև լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

(67-րդ հոդվածը փոփ. 27.07.01 ՀՕ-205, լրաց. 15.11.05 ՀՕ-229-Ն, 09.04.07 ՀՕ-178-Ն, փոփ. 18.05.10 ՀՕ-69-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-253-Ն)

Հոդված 975. Կողմերի իրավունքների սահմանափակումը համալիր թույլտվության պայմանագրով

1. Համալիր թույլտվության պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի իրավունքների սահմանափակում: Մասնավորապես, կարող են նախատեսվել՝

1) իրավատիրոջ պարտավորությունը՝ այլ անձանց չտրամադրել բացառիկ իրավունքների նույնանման համալիրներ՝ դրանք օգտագործողին ամրացված տարածքում օգտագործելու համար կամ ձեռնպահ մնալ այդ տարածքում նույնանման սեփական գործունեությունից.

2) օգտագործողի պարտավորությունը՝ չմրցակցել իրավատիրոջ հետ այն տարածքում, որի վրա տարածվում է համալիր թույլտվության պայմանագրի գործողությունը.

3) օգտագործողի հրաժարվելը՝ իրավատիրոջ մրցակիցներից (հնարավոր մրցակիցներից) համալիր թույլտվության պայմանագրով նույնանման իրավունքներ ձեռք բերելուց.

4) օգտագործողի պարտավորությունը՝ իրավատիրոջ հետ համաձայնեցնել պայմանագրով տրամադրված բացառիկ իրավունքներն իրականացնելու դեպքում օգտագործվող առևտրային շինությունների տեղաբաշխումը, ինչպես նաև դրանց արտաքին և ներքին ձևավորումը:

~~Սահմանափակող պայմանները կարող են անվավեր ճանաչվել հակամենաշնորհային մարմնի կամ այլ շահագրգիռ անձի պահանջով, եթե դրանք~~

համապատասխան շուկայի վիճակի և կողմերի տնտեսական դրության հաշվառմամբ հակասում են հակամենաշնորհային օրենսդրությանը: Սահմանափակող պայմանները կարող են անվավեր ճանաչվել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, այլ շահագրգիռ մարմնի կամ անձի պահանջով, եթե դրանք հակասում տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը:

2. Առոչինչ են համարվում համալիր թույլտվության պայմանագրով կողմերի իրավունքները սահմանափակող այն պայմանները, որոնց ուժով՝

1) իրավատերն իրավունք ունի որոշել օգտագործողի կողմից վաճառվող ապրանքի կամ օգտագործողի կատարած աշխատանքի, մատուցած ծառայության գինը կամ այդ գների վերին կամ ներքին սահմանը.

2) օգտագործողն իրավունք ունի ապրանքներ վաճառել, աշխատանքներ կատարել կամ ծառայություններ մատուցել բացառապես գնորդների (պատվիրատուների) որոշակի խմբին կամ պայմանագրով որոշված տարածքում գտնվելու վայր (բնակության վայր) ունեցող գնորդներին (պատվիրատուներին):